

# «ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

## ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

### Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները

**Հաջորդ հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերության հետագա զարգացման խնդիրները և նպատակները հետևյալն են.**

- Ընկերությունը կշարունակի իր հիմնական գործունեությունը՝ գործընկեր ֆինանսական հաստատությունների կողմից տրամադրված բնակարանային հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորումը:

- Ըստ կանխատեսումների, Ընկերության կողմից իր գործընկերներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը 2015թ.-ին կաճի մոտ 11%-ով՝ կազմելով մոտ 30 մլրդ ՀՀ դրամ: Այդ ժամանակահատվածում Ընկերությունը նախատեսում է վերաֆինանսավորել գործընկեր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից բնակչությանը տրամադրվելիք ավելի քան 1000 հիփոթեքային վարկ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

- Իր գործունեության ծավալները մեծացնելու և հիփոթեքային վարկավորումը աշխուժացնելու նպատակով Ընկերությունը միջոցներ կձեռնարկի ընդլայնելու իր գործընկերների ցանկը, ինչպես նաև կիրականացնի բնակչության իրազեկման միջոցառումներ՝ շեշտադրելով ՀՀ մարզերը:

- Իր գործունեության ֆինանսավորման նպատակով Ընկերությունը կօգտագործի ինչպես ներկայում իրեն հասանելի միջոցները (սեփական միջոցներ, Ֆրանսիական զարգացման գործակալության հետ կնքված վարկային գիծ), այնպես էլ պարտատոմսերի հերթական թողարկումից և տեղաբաշխումից ստացված միջոցները: Մասնավորապես, 2015 թվականի ընթացքում Ընկերությունը նախատեսում է տեղաբաշխել 1-1.5 միլիարդ ՀՀ դրամի պարտատոմսեր: Հաշվի առնելով տնտեսությունում տիրող իրավիճակը և հնարավոր ներդրողների կողմից ներկայացվող պահանջարկը՝ կանխատեսվող ժամանակաշրջանում

Ընկերության կողմից թողարկված պարտատոմսերը կլինեն մեկից մինչև երեք տարի մարման ժամկետով:

Միևնույն ժամանակ, Ընկերությունը նախատեսում է քայլեր ձեռնարկել արտաքին այլ աղբյուրներից (միջազգային զարգացման գործակալություններից) դրամական միջոցների ներգրավման ուղղությամբ՝ նպատակային ծրագրեր իրականացնելու նպատակով:

Ինչպես և հիմնադրման օրվանից, Ընկերության ռազմավարությունն ուղղված է լինելու խելամիտ և կառավարելի ռիսկայնության և շահութաբերության համակցությանը:

